№ 55 Մարտի 26 (Ապրիլի 7) 1881 Մարտի 26 (Ապրիլի 7) № 55

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարարաղաքացիք գիրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է միմեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր թութակները։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իտալիա։ Գերմանիա։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՄԵՐ ԹՈՒԹԱԿՆԵՐԸ

—

Մեզանում, հայերիս մէջ սովորութիւն կայ արտասանել գեղեցիկ բառեր, ճոճող ֆրազներ, առանց նրանց իմաստը հասկանալու։

Այդ տեսակ ֆրազներին պատկանում է և այն մեզանում ամենտեղ կրկնվող գեղեցիկ, բայց անիմաստ նախադասութիւնը, թէ «մեր ազգի բարոյական վերածնելութեան միակ միջոցը դպրոցներն են։»

Այդ նախադասութիւնը բոլոր հայերս կրկնում ենք թութակի պէս, այդ նախադասութեամբ սկսվում են գրեթէ բոլոր թերթակցութիւնները, որոնք ստացվում են խմբագրութեան մէջ։

Ասենք թէ մեր հայոց դպրոցները շատ լաւ են, ասենք թէ նրանք հասնում են իրանց նպատակին և ճշմարիտ բարոյական և մտաւոր զարգացումը ազգի մէջ տարածելու մի զօրեղ միջոց են կազմում,—դարձեալ, որքան էլ լաւ լինեն դպրոցները, ոչ մի ազգի մէջ չէ կարելի ասել թէ ուսումնարանները ազգի մտաւոր և բարոյական վերածնելութեան միակ միջոց են, քանի որ մարդկային ժամանակակից հասարակութիւնը ճանաչում է մի այլ, նոյնքան, և գուցէ աւելի զօրեղ գործիչ ազգի մտաւոր և բարոյական զարգացման.... Այդ միջոցը մամուլն է, այդ բառի լայն նշանակութեամբ, որ իր մէջ ամփոփում է գրականութիւնը և լրագրութիւնը, որի այլ և այլ ներկայացուցիչներն են՝ լրագիրը, ամսագիրը և գիրքը....

Հեռու չը գնանք. վեր առնենք, որպէս օրինակ Ռուսաստանը և ռուս այժմեան հասարակութիւնը։ Այդտեղ մենք տեսնում ենք որ հասարակութեան մէջ բարոյական և մտաւոր զարգացման գործիչներից մամուլը աւելի զօրեղ, աւելի գործնական, աւելի դրական միջոց է, քան թէ դպրոցը, որի կազմակերպութիւնը դեռ ևս շատ թոյլ, պակասաւոր և շատ քիչ ընդհանրացած է ազգաբնակութեան թւին համեմատ։

Մեզ մօտ, հայերիս մէջ, առաւել ևս կարելի է ասել, որ մամուլը աւելի զօրեղ միջոց է ազգի բարոյական և մտաւոր զարգացման, քան թէ ուսումնարանը։ Մեզ մօտ, մամուլը տասնամեայ մէջ աւելի արաւ ազգի մտաւոր և բարոյական զարգացման համար, քան թէ դպրոցը յիսուն տարվայ մէջ։

Այն երկիրների մէջ, որտեղ դպրոցական սիստեմը օրինակելի է, այնտեղ էլ ոչ ոք չի համարձակվի ասել, որ ազգի վերածնելութեան միակ միջոցը դպրոցն է, այնտեղ էլ նոյնքան և գուցէ աւելի մեծ աղդեցութիւն ունի ազգի մտաւոր և բարոյական զարգացման վրա մամուլը, ուր մնայ մեր հասարակութեան պէս մի հասարակութեան մէջ, որտեղ դպրոցը ամենաթշուառ, սկզբնական, նահապետական, տձև դրութեան մէջն է դեռ ևս։

Ընդունենք որ Ներսիսեան դպրոցը առաջինն էր, որ հիմնվեցաւ կովկասեան հայերիս մէջ. արդէն յիսուն տարուց աւելի է որ նա գոյութիւն ունի։ Նրանից յետոյ հիմնվեցան թէ Թիֆլիսում և թէ կովկասեան հայաբնակ գաւառական քաղաքներում ուրիշ բազմաթիւ թէ արական և թէ իգական դպրոցներ։ Եւ անկասկած մեր դպրոցներից ամենալաւերը, թէ արականները և թէ իգականները Թիֆլիսումն են գտնվում, որ համարվում է ռուսաց հայերիս մտաւոր կեանքի կենտրոն։

Բայց ի՞նչ շոշափելի գործ կատարեցին այդ բոլոր դպրոցները տարիների ընթացքում։

Նրանք գրագիտութիւնը տարածեցին, կը պատասխանեն մեզ, ուրիշ ի՞նչ կարելի է պահանջել դպրոցից....

Եթէ գոնէ այսքան անէին մեր ուսումնարանները, եթէ ճշմարիտ ազգի մէջ մայրենի գրագիտութեան տարածման նպաստող լինէին, մենք շատ գոհ կը լինէինք և կասէինք որ մեր դպրոցները կատարեցին իրանց պաշտօնը, հաւատարիմ մնացին իրանց կոչմանը....

Նախ մեր խմբագրական տասարդէօք նա է տէրը թէ ինքը։ Այդ էր նրա ընտանիքը՝—ձին, ինքը և ծառան,—եթէ աւելացնենք դրանց վրա նրա ահագին գայլամանն չունը, ընդամենը չորս հոգի։

Իշխանը անհանգիստ էր. տախտի վրա պառկած, անդադար մի կողքից դէպի միւսն էր շուռ գալիս։ Նրա անհանգստութիւնը ուրախութեան անհանգստութիւն էր. դա նոյնքան ծանր է, որքան տխրութիւնը։ Լցված սիրտը կամենում էր թեթևացնել. իր ուրախութեանը կամենում էր մի բարեկամի ևս մասնակից անել։ Բայց «ո՞ւր մնաց նա, ինչու ուշացաւ»։ Նա վեր կացաւ, սկսեց անցուդարձ անել սենեակի մէջ. այդ ևս չուտով ձանձրացրեց նրան։ Դուրս եկաւ բակը։ Գարնանային խաղաղ գիշերը բուրում էր զուարթացուցիչ անուշհոտութեամբ։ Ամենուրեք տիրում էր լռութիւն. ամբողջ Մըցխէթը քնած էր։ Նա սկսեց ման գալ բակում, որի տարածութիւնը շատ ընդարձակ չէր։ Գրեթէ հարիւր անգամ անցաւ նա բակի մի ծայրից դէպի միւսը, երբեմն կանգնելով, և ցանկապատից նայելով դէպի խաւար փողոցը։ «Ո՞ւր մնաց, ինչու ուշացաւ»..... անհամբերութեամբ կրկնում էր նա։ Եթէ մէկը այն անագան գիշերային պահուն տեսնելու լինէր Իշխանին այդ տենդային դրութեան մէջ, անպատճառ կը մտածէր, թէ նա սպասում է իր սիրուհուն, բայց նրան այժմ հազիւ թէ կարող էր գրաւել կնիկների ամենագեղեցիկն անգամ։ Նա սպասում Մխիթար սպարապետին, որ ժամադիր էր եղած իր մօտ գալու մի քանի կարևոր հարցերի մասին խորհելու համար։

Վերջապէս եկաւ նա։ Բակի ցանկապատից, որ այնքան բարձր չէր, տեսաւ նա, որ մէկը փողոցով գալիս էր։ Սպասաւորը լուսաւորում էր նրա ճանապարհը ձեռքի լապտերով։ Իշխանը առանց իր ծառային զարթեցնելու, ինքը գնաց բակի դուռը բաց արեց։

—Լաւ հիւանդի խնձոր բերող կը լինես, մինչև բերես, նա հոգին կը տայ, ասաց Իշխանը, բակի դուռը կրկին կողպելով։

—Ես գիտէի, որ այսպէս պիտի ասես, պատասխանեց սպարապետը,— իսկ եթէ գիտենաս իմ ուշանալու պատճառը, չես մեղադրի ինձ։

Երկուսն էլ մտան Իշխանի սենեակը։ Սպարապետի հետ եկող ծառան գնաց ախոռատունը սպասելու իր տիրոջը։

—Հիմայ պատմիր, ինչ չմնեցիր, հարցրեց սպարապետը, նստելով տախտի վրա։

—Գործը ինքն իրան չմնվեցաւ.... և ես հաւատացած էի, որ այսպէս էլ կը լինէր, պատասխանեց Իշխանը ուրախութեամբ։— Մի քանի ժամ առաջ ինձ մօտ էին, բոլորն էլ երդվեցան, թէ կը գան մեզ հետ։

—Բայց դու չը պիտի յայտնէիր նրանց գործի բուն նպատակը։

—Բայնդուրը խելքը հացի ու պանրի հետ չի կերել։ Նա այդ սատանայութիւնները չատ լաւ է իմանում։ Նա գիտէ, որ բանը չը պիտի հասկանայ, թէ ինչ նպատակով մշակը նրանով փորում է հողը։

—Ուրեմն դու ինչ կերպով բացատրեցիր նրանց։

— Շատ հասարակ կերպով. ես այսքանը միայն ասեցի, թէ բէկը մի սարսափելի տեղեկութիւն է ստացել. Հայաստանում կազմվել է մի մեծ դաւադրութիւն. մահմեդականները պատրաստվել են հայերին կոտորելու և հայերը բէկից օգնութիւն են խնդրում։ Այդ հէնց որ լսեցին, բոլորը կատաղեցան, բոլորը վառվեցան, և առանց իմ թելադրութեան, իրանք պատրաստականութիւն յայտնեցին Հայաստան գնալու և իրանց հայրենակիցներին օգնելու։ Այդ չափազանց ուրախացրեց ինձ. ես մինչև այսօր կարծում էի, թէ Կախեթի գիւղն, վրացիներից ստացած անհոգութիւնը իսպառ փչացրել է դրանց, բայց այսօր համոզվեցայ, որ հայի սրտում չէ հանգչում հայրենասիրութեան կայծը, նա հանգամանքներից փոքր ինչ նսեմանում է միայն. բաւական է փչել նրա վրա և ահա նա կը բորբոքվի, կը բոցավառվի...

Վերջին խօսքերը արտասանեց Իշխանը խիստ զգալի ոգևորութեամբ, երևում էր, մի և նոյն սուրը հուրը բորբոքվում էր և նրա սրտում։ Բայց սպարապետը բաւական սառնութեամբ հարցրեց.

—Ո՞վքեր են ցանկացողները։

—Այստեղ գտնվող բոլոր հայ վարատականները. լոռեցի Աֆթանդիլ գնդապետը, մեծ Գիւորգին, փոքր Գիւորգին, երևանցի կաղ Օհանէսը, շուշեցի Զաքարիայ Իշխանը, նախիջևանցի պատանի Մօսին, շամախեցի Թադէոս բէկը, գանձակեցի Եղիազար աղան, վաղարշապատցի Յարութիւն տանուտէրը,—բացի դրանցից կան ուրիշները, որոնց դու չես ճանաչում։ Հաշուել եմ, մեր բոլորի թիւը քառասուն հոգի կը լինի այս տեղից դուրս գալու ժամանակ։

—Բայց դու վստահութիւն ունես այդ մարդկանց հաւատարմութեան վրա, հարցրեց սպարապետը ցած ձայնով։

—Բոլորին իմ հինգ մատի պէս ճանաչում եմ. չափազանց ճարպիկ, յաջողակ, փորձված և վերին աստիճանի անձնանուէր մարդիկ են։ Եթէ ասելու լինես՝ կրակի մէջը մտիր, իսկոյն կը նետվեն։ Եւ գլխաւորն այն է, որ այդ մարդիկներից ամեն մէկը ունի իր պատմութիւնը, տոգորված է իր տոհմային ատանդութիւններով։ Նրանցից չը կայ մէկը, որ իր սրտում չը կրէր մի գաղտնի վերք, որ ստացել էր բռնութեան կոպիտ ձեռքից։ Եւ հէնց այդ տեսակ հալածված, տանջված և վշտացած մարդիկը մեզ պէտք կը գան։

—Ես էլ այսպէս եմ կարծում, ասաց սպարապետը և նրա մռայլված դէմքը, որ մինչև այժմ բաւական տխուր էր երևում, սկսեց փոքր առ փոքր պայծառանալ։

Հաղորդելով սպարապետին իր տեղեկութիւնները, Իշխանը հարցրեց.

տարվայ գործունէութեան փորձից մենք համոզվեցանք, որ շատ սակաւ բացառութեամբ կը գտնէք մի որ և է հայոց դպրոցում իր ուսումը աւարտած մի հայ կամ հայուհի, որ ոչ թէ միայն անսխալ կերպով հայերէն գրէր, բայց ուղղագրութեան կողմից քիչ թէ շատ օրինաւոր կերպով տիրապետէր իր մայրենի լեզուն....

Երկրորդ՝ պէտք է պարզել ինչ է գրագիտութիւն ասած բանը: Եթէ գրագիտութիւն ասելով մենք պէտք է հասկանանք կարդալ ու գրել իմանալը, — այն ժամանակ մենք վիճելու առիթ չենք ունենայ մեր դպրոցների ուղևորված պաշտպանների դէմ: Բայց եթէ գրագիտութիւնը մեքենայական գործողութիւն չէ միայն, այլ նրա մէջ պարունակվում է և մի բարոյական խորհուրդ, այն ժամանակ ամենականոնաւոր կերպով կարդալ գրել իմացողին էլ մենք դեռ ևս գրագէտ, այդ բառի բուն նշանակութեամբ անուանել չենք կարող:

Ի՞նչ նպատակ պէտք է ունենայ իւրաքանչիւր դպրոցը, թէ արական և թէ իգական. նրա նպատակը պէտք է լինի մի այնպիսի զօրեղ բարոյական և մտաւոր զարկ տալ աշակերտին, որ մտաւոր կեանքի պահանջ չը զգացողը ստանայ այդ մտաւոր պահանջը, որ դպրոցից դուրս գալուց յետոյ էլ աշակերտը շարունակի մտաւոր կեանքով ապրելու:

Բայց մեր բոլոր դպրոցներում գրագիտութիւնը մի մեքենայական, անշունչ գործողութիւն է միայն: Գրագէտ լինել, կը նշանակէ մեզանում կարդալ գրել իմանալ, բայց ոչ պահանջ զգալ կարդալ և գրել: Գրագէտ դարձնել կը նշանակէ մեզանում կարդալ գրել սովորեցնել, բայց ոչ թէ մարդու մէջ նրա ամբողջ կեանքի համար պահանջ ծնեցնել մտաւոր կեանքով ապրելու:

Ներսիսեան դպրոցից կամ Գայեանեան ուսումնարանից աւարտում են մի հայ երիտասարդ և մի հայ օրիորդ: Նրանք երկուսն էլ հայերէն կարդալ գրել գիտեն: Բայց ուսումն աւարտելուց և վկայականը գրպանը դնելուց յետոյ, այդ երիտասարդը և այդ օրիորդը իրանց կեանքի ամբողջ ընթացքում այլ ևս ոչինչ չեն կարդում, այլ ևս պահանջ չեն զգում որ և է մտաւոր կեանքով ապրելու: Այդ բաւական չէ. ուսումնարանը թողած, նրանք այլ ևս ոչինչ պահանջ չեն զգում իրանց մայրենի լեզուով խօսելու, այլ շարունակում են իրանց ամբողջ կեանքը օտար լեզուով խօսելու, որի հմտութիւնից նրանք մինչև անգամ այն օգուտն էլ չեն քաղում, որ կարդան այդ լեզուով հրատարակվող գրքերն ու լրագիրները:

Ուրեմն յայտնվում է որ դպրոցը սովորեցրել է նրանց կարդալ գրելը ոչ թէ նրանց մտաւոր գոյութեանը փրկարար զարկ տալու, մտաւոր կեանքի պահանջ նրանց մէջ ներշնչելու համար, այլ սովորեցրել է նրանց գրագիտութիւնը որպէս մի անշունչ, մեքենայական և կեանքի մէջ անգործադրելի մի գործողութիւն....

Եւ այդ տեսակ դպրոցները համարվում են մեզանում ազգի բարոյական և մտաւոր վերածնելութեան գործիչներ....

Եւ դպրոցական այդ անշունչ, մեքենայական, անկենդան, անգործադրելի և աննպատակ գործունէութեան հետևանքն էլ ակներև է մեզ համար:

Տաս տարվայ ընթացքում մենք տեսնում ենք որ իւրաքանչիւր տարի կովկասեան բազմաթիւ թէ իգական և թէ արական հայոց դպրոցներից անթիւ աշակերտուհիներ և աշակերտներ են դուրս գալիս, — բայց գրքի, լրագրի, ամսագրի կարդացողների թիւը դարձեալ մազի չափ չէ աւելանում....

Ուրեմն գրագիտութեան բառի լայն և բարձր նշանակութեամբ մեր դպրոցները մինչև անգամ գրագիտութիւնն էլ չեն տարածում, գրագէտ մարդիկ էլ չեն պատրաստում, քանի որ գրագիտութիւնը մի մեռած, աննպատակ գործողութիւն չէ, այլ գիտակցական, մտաւոր անընդհատ զարգացման, կենսական անհրաժեշտ պահանջ պէտք է լինի, որ միշտ կարօտ պէտք է լինի մտաւոր նոր և նոր սնունդի:

Կրկնում ենք մեր հարցը. մի՞թէ այդ տեսակ դպրոցներ կարող են համարվել ազգի վերածնութեան միջոցներ....կամ աւելի ճիշդ չէ՞ր լինի արդեօք նրանց գոյութիւնը անուանել ժամանակաւորութիւն, իսկ մեր մանկավարժների գործողութիւնը աննպատակ ջուր մաղելը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թագաւոր Կայսրը դեռ չէ անցել Զմեռնային պալատը, այլ դեռ կենում է Անիչկով ասված պալատի մէջ, որտեղ կենում էր և Թագաժառանգ եղած ժամանակ: «Новое Время» հաղորդում է որ Անիչկով պալատից հեռագրական թել են անցկացնում մինչև Զմեռնային պալատը:

—

Մարտի 17-ին, ինչպէս հաղորդում են լրագիրները, Թագաւոր Կայսրին ներկայացան պատգամաւորութիւնները զէմստվօներից, քաղաքներից, ազնուականութիւններից և գիւղացիներից: Գիւղացիների պատգամաւորութիւնը ծնկաչոք ներկայացրեց Թագաւորին աղ և հաց: Թագաւորը ամենքին շնորհակալութիւն յայտնեց իրանց համակրութեան համար:

—

«Моск. Телеграфъ» լրագիրը լսել է որ Թագաւորին ներկայանալու համար եկած բոլոր պատգամաւորութիւններից լեհական պատգամաւորութեանը հրամայված է դարձեալ մի քանի ժամանակ մնալ Ս. Պետերբուրգում:

—

Վարշավայի համալսարանի մէջ լեհական գրականութեան պրոֆէսոր նշանակվել է Խմալովսկի:

—

Մինիստրների խորհուրդը շուտով քննելու է հոգևորականութեանը տրվող առճիկների աւելացնելը:

—

Լուր կայ որ զօրքի մի մասի օֆիցէրներին թոյլ

—Հիմայ դու պատմիր, ինչպէս վերջացրեց բէկը մեծ պարոնի հետ. ես այսօր ժամանակ չունեցայ նրան տեսնելու:

—Ես տեսնվեցայ, շատ լաւ է վերջացրել, պատասխանեց սպարապետը,—մի այնպիսի բան է հնարել, որ կարողացել է մեծ պարոնի հաճութիւնը ստանալ:

—Այսպիսի դէպքերում փոքր ինչ խորամանկութիւնը, իմ կարծիքով, ներելի է, ասաց իշխանը ծիծաղելով,—ես կարող եմ երևակայել, թէ ինչ բան հնարած կը լինի:

—Նա յայտնել է մեծ պարոնին, թէ դիտաւորութիւն ունի Էջմիածին ուխտ գնալու, թէ այնտեղ մեռոն պիտի եփվի, ցանկանում է ներկայ գտնվել այդ հանդիսին: Եւ այս առիթով նպատակ ունի այցելել իր հայրենիքը, որից շատ տարիներ բաժանված է:

—Վատ չէ հնարել, ասաց իշխանը շարունակելով իր ծիծաղը,—ուխտագնացութիւնը մտահաւատների վրա միշտ մեծ ազդեցութիւն է անում: Իսկ եթէ բէկը պարզ յայտնելու լինէր իր նպատակը, ինչ ես կարծում, գուցէ մեծ պարոնը իր կողմից կօգնէր նրան:

—Նա վրացիների օգնութեան վրա վստահութիւն չունի: Եւ մեծ պարոնը կախված լինելով պարսիկներից, գուցէ ինքը առաջինը կը լինէր, որ կը մատնէր նրան, պարսիկներին մի ծառայութիւն անելու համար:

—Շատ հաւանական է, ասաց իշխանը,—դրանցից ամեն բան կարելի է սպասել: Իսկ այդ ուխտագնացութեան պատրուակը կասկածի մէջ չի՞ գցի մեծ պարոնին:

—Չը կարծեմ, որովհետև բէկը վաղուց խօսում էր այդ ուխտագնացութեան մասին, իսկ մեծ պարոնը միշտ յետ էր զցում: Առաջ նա սուրբ տեղերի անունով դիտաւորութիւն ունէր ճանապարհորդել Հայաստան, նրա դրութիւնը անձամբ հետազօտել և յետոյ սկսել գործը, իսկ այժմ հանգամանքները չտապիցրին նրան:

—Այդ ինչ:

—Դեռ մի տարի առաջ, երբ տակաւին Սիւնեաց աշխարհից այդ նամակները չէին ըստացված:

—Զարմանալի ծածկամիտ մարդ է եղել այդ բէկը, ասաց իշխանը գլուխը շարժելով.—ես մինչև այսօր հաւատացած էի, որ նա ինձանից ոչինչ գաղտնիք չունի, բայց հիմայ ուրիշ կերպ է դուրս գալիս: Մի տարի առաջ նա մտածում էր մի խարուսիկ ուխտագնացութեան վրա, իսկ ես այդ մասին դեռ ոչինչ չը գիտեմ:

—Գուցէ այժմս էլ ես և դու շատ բաներ չը գիտենք, ինչ բաների մասին որ մտածում է նա, պատասխանեց սպարապետը ժպտելով,—բայց պէտք է հաւատանք, որ նրա վարմունքները, ինչ տեսակ և լինէին նրանք, անկեղծ են և գործի օգտին են ծառայում: Այս պատճառով, մենք նրանից խիստ պահանջող չը պիտի լինենք, և պիտի բաւականանանք այնքանով միայն, որքան որ նա հարկաւոր է համարում մեզ հաղորդել: Նրա ազնուութիւնը մեծ երաշխաւորութիւն է, որ նա չի խաբի մեզ:—Կարծեմ դու ինձ հետ կը համաձայնվես, որ նա չափազանց ազնիւ մարդ է:

—Բոլորովին համաձայն եմ, պատասխանեց իշխանը,—նա աւելի ազնիւ է, որքան հարկաւոր է, որ մարդս լինի ազնիւ:

Բոլշեական մտածութիւնից յետոյ հարցրեց նա.—Իսկ այդ պարոնները ինչ անունով պիտի գան մեզ հետ:

—Դարձեալ ուխտագնացութեան անունով, պատասխանեց սպարապետը:—Իբրև հայ, Էջմիածին գնալու համար, ոչ ոք նրանց մասին կասկած չի տանի: Բացի դրանից, մի ուրիշ բան կայ. այդ պարոնները թէև այստեղ զանազան պաշտօններ ունեն, բայց բոլորն էլ գտանվում են բէկի հովանաւորութեան ներքոյ և կազմում են նրա թիկնապահների խումբը: Այս մտքով բէկը շատ պատճառներ ունի նրանց իր հետ տանելու: Ի հարկէ, նա իր պատուի ու աստիճանի համեմատ պիտի ունենայ իր թիկնապահները, իր սվիտան, և քառասուն մարդը շատ չէ նրա համար:

—Ի հարկէ շատ չէ և ցանկացողները քառասուն մարդից աւել չեն լինի, ասաց իշխանը:—Բայց դու գիտես, թէ ումը յանձնվեցաւ բէկի պաշտօնը:

—Արշիլին, միայն առժամանակեայ կառավարութեան համար, պատասխանեց սպարապետը:—Բայց պէտք է խոստովանած, որ բէկը այդ մի քանի տարվայ ընթացքում այնքան բարեկարգեց Վրաստանը, այնքան լաւ կարգի դցեց նրա խանդարված գործերը, որ այսուհետև շատ հեշտ է կառավարել նրան, միայն թէ կառավարիչները աշխատէին պահպանել այն, ինչ որ նա հիմնեց: Բայց ես հաւատացած եմ, որ նրա բացակայութեան ժամանակ կրկին ամեն ինչ տակն ու վրա կը լինի:

—Իսկ ինչ կարգադրութիւններ արեց բէկը իր կալուածների և գիւղերի վերաբերութեամբ, հարցրեց իշխանը:

—Ոչինչ, նա իր կալուածների մասին ամենևին չի էլ մտածում, բոլորը թողնում է:

—Վատ չէր լինի, եթէ ծախէր, գուցէ փողերը մեզ պէտք կը գային:

—Մի և նոյնը ես առաջարկեցի նրան, ասաց սպարապետը,—բայց նա ինձ պատասխանեց, թէ «պատերազմի գործը պէտք է պատերազմով սընանվի»:

—Այսուամենայնիւ, սկզբում միջոցներ հարկաւոր են:

—«Ինձ խիստ փոքր միջոցներ հարկաւոր են գործը սկսելու համար, իսկ այդ միջոցները ունեմ ես», ասում է բէկը:—Եւ իմ կարծիքով, նրա անձնավստահութիւնը շատ ուղիղ է: Կալուածների վաճառելը կարող էր միայն կասկած յարուցանել և փչացնել այն ծրագիրը, որ կազմել է նա: Իսկ գործի սկսելու համար ես էլ համաձայն եմ նրա հետ, որ մեծ միջոցներ պէտք չեն: Աղէքսանդր մակեդոնացիները, Լենկ-թէմուրները, Զինգիս-խանները իրանց հետ գանձ չէին ման ածում, այլ կերակրվում էին իրանց սրով:

—Բայց եթէ մենք չը գտնենք Հայաստանում այն նախապատրաստութիւնները, որ խոստանում են մեզ Սիւնեաց աշխարհից ստացված նամակներով,—այն ժամանակ, կարծեմ, բանը կը դժուարանայ և փոքր միջոցներով մի նշանաւոր գործ կատարել անհնարին կը լինի, ասաց իշխանը:

—Ես աւելի քան թէ դու, սիրելի Բայինդուր, սովորած եմ թերահաւատութեամբ վերաբերվել դէպի անակնկալ բախտի յաջողութիւնը, պատասխանեց սպարապետը,—իսկ այդ գործում համոզված եմ, եթէ Սիւնեաց աշխարհում ոչինչ նախապատրաստութիւններ ևս չը լինեն, մեզ դարձեալ կը յաջողվի: Դու քանի բոպէ առաջ ինքդ ասացիր, թէ հայերի սրտում բոլորովին չէ հանգած հայրենասիրութեան կայծը, այլ հանգամանքներից փոքր ինչ նսեմացած է միայն. բաւական է փչել նրա վրա և իսկոյն կը բորբոքվի, կը բոցավառվի.... Դրանք քո խօսքերն են: Իսկ բոցավառել, բորբոքել հայրենասիրութեան սրբազան հուրը՝ մենք կարող ենք: Եւ այդ կը լինի գործի յաջողակ սկիզբը. իսկ վախճանը Աստուծոյ ձեռքումն է: Ես այնքան հաւատում եմ Հայաստանի աստղին, որքան հաւատում եմ, թէ կայ երկնքում մի արդար Դատաւոր, որը վերջապէս կը լսէ թշուառի ձայնը և նրան ուժ ու զօրութիւն կը տայ փչրելու ամբարտաւան բռնակալի եղջիւրները:

Նրանք դեռ երկար խօսում էին և խորհում էին միմեանց հետ, մինչև զարմացած նկատեցին սենեակի նեղ լուսամուտներից վաղորդեան արեգակի ճառագայթները: Այժմ միայն հասկացան, որ ողջ գիշերը լուսացրել են:

(Կը շարունակվի)

կը տրվի ծառայութենից դուրս հագնել քաղաքական չորեր։ Նոյնպէս լուր կայ որ զինուորական կանոնադրութիւնը կը վերաքննվի և աւելի պարզ ու հասարակ պէտք է լինի։

—

Մոսկվայի երաժշտական դպրոցը, կոնսերվատորիա, Նիկոլայ Ռուբինշտայնի մահից յետոյ, դիտաւորութիւն ունի առաջարկել դիրեկտորի պաշտօնը նրա եղբօր, Անտոն Ռուբինշտայնին։

—

«Кавказскій Курьеръ» լրագրի № 60-ից ըսկսած բանասիրական մասում տպում է Բաֆֆիի «Դաւիթ Բէկ» վէպի ռուսերէն թարգմանութիւնը, որ բաւական աջողված է թէ լեզուի և թէ արևելեան դարձուածների ճիշդ արտայայտութեան կողմից։

—

Ախալքալաքից մեզ գրում են որ այդ քաղաքում աւազակութիւնները օրից օր բազմանում և սաստկանում են, բայց աւազակներից ոչ մինը չէ կալանաւորվում։ Այս օրերս աւազակները կոտրեցին գիշեր ժամանակ քաղաքի մի հարուստ մարդու տունը, բայց բարեբաղդաբար չը կարողացան կողոպտել, որովհետև տան տիրոջ որդին այդ ժամանակ կլուբից տունն վերադառնալով, օգնութիւն կանչեց և աւազակները փախան, իրանց հետ մի անչնչան աւար տանելով։

—

Վլադիկավկասից մեզ գրում են։ «Այստեղ գտնվումեն եօթ տուն հայ կաթոլիկներ, որոնցից թէև ոչ մինը ինքն չէ ստանում հայերէն թերթ, բայց կարդում են «Մշակը» և մեծ համակրութեամբ են վերաբերվում դէպի ձեր լրագրի քարոզած գաղափարը այլ և այլ կրօնաբաժան մասերի ազգային միութեան մասին։ Այստեղի հայ լուսաւորչականների և հայ կաթոլիկների մէջ չը կայ ատելութեան զգացմունք. նրանք սիրով են վերաբերվում միմեանց մէջ։ Բայց ափսոս որ մեր քահանաները փոխանակ աշխատելու բարոյական կապ հաստատելու երկու դաւանութիւններին պատկանող ազգայինների մէջ, միայն թղթախաղով են զբաղված և թէև իրանց տունը հրաւիրումեն հայ կաթոլիկներին էլ, բայց միայն դրա համար, որ թղթախաղով դարդակեն խեղճերի գրպանները, քաղաքավարի և դիտակցական կերպով կողոպտեն նրանց, կանաչ սեղանի շուրջը նստած»։

—

«Новое Время» հաղորդում է որ գրեթէ հաստատ է թէ Մոսկվայի ընդհանուր ռուսեստագործական հանդէսը լինելու է 1882 թվին։

—

Գաւառական շատ քաղաքներից մեզ հեռագրով և նամակներով շնորհակալութիւն են յայտնում «Մշակի» № 44 մէջ տպված «Հասարակական հանելուկ» առաջնորդող յօդուածի համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Հռոմից հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Վերջին օրերի ընթացքում ոչ թէ միայն Ռուսաստանի մէջ, այլ և արտասահման օրվայ հարցերը յետ են քաշվել մարտի 1-ի եղեռնագործութեան պատճառով։ Այստեղի թէ հասարակութեան, թէ քաղաքական շրջանների և թէ պալատի մէջ սարսափելի լուրը մեծ ազդեցութիւն ունեցաւ, մանաւանդ որ Իտալիայի մէջ սաստիկ կերպով է արտայայտվում յեղափոխական կուսակցութիւնների շարժումը։ Թէ կառավարութեան և թէ կառավարչական ձևի վրա անդադար յարձակվում են, հանրապետական ցոյցերը բացարձակ են կատարվում։ Իտալական մամուլի գրեթէ մի երրորդականը արմատական ուղղութեան է պատկանում և դեռ ոչ ոք չէ մոռացել այն շարժումը, որ կատարվում էր Իտալիայի մէջ անցեալ ամառը և աշնանը։ Իւրաքանչիւր շաբաթ ամբողջ երկրի մէջ ժողովներ էին կայանում, որոնց մէջ պաշտպանվում էր ընդհանուր ձայնատուութեան եղանակը։ Երբ Գարիբալդի գնաց Ջենովա, քիչ էր մնում փողոցային արիւնահեղ դէպքեր պատահէին։ Վերջապէս հոկտեմբերին ժողովուրդը պատուեց Մենտանայի մօտ ըսպանված հերոսներին, նրանց արձան կանգնեցնելով։ Սոցիալիստներն էլ գաղտնի կերպով շարժվում են և ձեռք են մեկնում հանրապետականներին։ Այդ պատճառով Ռուսաստանի մէջ վերջին երեք տարիների ընթացքում պատահող անցքերը, որոնք սարսափելի վախճան ունեցան, առանձին նշանակութիւն ունէին Իտալիայի համար և կրկնապատկում էին նրա ուշադրութիւնը։ Ժողովրդական շարժումը ինչ ձև էլ նա ունենայ և որտեղ էլ կատարվի ընդհանուր եւրոպական շարժում է և ամենքին միատեսակ է վերաբերում։ Ռուսաց նիհիլիզմը այդ շարժման չափազանց արմատական արտայայտութիւնն է և այդ պատճառով Եւրոպայի քաղաքական բոլոր կուսակցութիւնները ուշադրութիւն են դարձնում Ռուսաստանի մէջ կատարվող գործերի վրա։ Այն գաղտնիքները, որոնցով շրջապատված է նիհիլիզմը, նրա իսկական ոյժերի և կազմակերպութեան մասին հաստատ տեղեկութիւնների բացակայութիւնը, աւելի էլ ազդում է երևակայութեան վրա։

Ժողովրդական շարժումը ամենանշանաւոր հարց է ներկայացնում Իտալիայի համար։ Իտալացիները բաւական դժուար դրութեան մէջ են. մի կողմից վերջացաւ պետութեան կազմակերպութեան ժամանակափոխը և սկսվեցաւ ժողովուրդի ընդունած սահմանադրութեան սկզբունքների մշակելը, միւս կողմից այժմեան պետական կազմակերպութեան դէմ հանրապետական ցոյցեր են կատարվում, որոնք հետզհետէ տարածվում են երկրի մէջ։ «Ո՞վ է իմանում, գուցէ իմ ապրուստը ստիպված կը լինեմ կափէ-շանտանների մէջ հայթայթել», հանաքով ասել է մի անգամ իտալական թագուհին երդեցողութեան իր ուսուցչին և այդ հանաքը նկարագրում է պալատի տրամադրութիւնը, ցոյց տալով, թէ որքան նշանաւոր է գործերի այժմեան դրութիւնը։ Այժմ Իտալիայի մէջ շատ հետաքրքիր ժամանակամիջոց է անցնում։

Նա ստիպված է պարզել և ուսումնասիրել շատ բան, որոնք մեր ժամանակակից քաղաքական կեանքի մէջ կարող են օտարոտի, անհասկանալի և ցաւալի թվել։

Իտալիան Եւրոպայի նշանաւոր պետութիւններից առաջինն է, որ անպայման ընդունել է սահմանադրական կազմակերպութիւնը։ Քսան տարիների ընթացքում միմեանց հետևող անտեսական շահեր և քաղաքական վարդապետութիւններ Իտալիայի մէջ ծագել են, զարգացել և այժմ բաց են մնացած։ Նրանց ազատ մրցումը համաձայնութիւն կայացրեց, արդէն ապագայի նախագիծ է մշակվում և վերջին երկու տարիների ընթացքում պարլամենտը անդադար հաւանութիւն է տալիս զանազան վերանորոգութիւններին։ Պետական տնտեսութիւնը կարգի է բերված, ոչնչացրած են մի քանի նշանաւոր հարկեր։ Վարչական և ֆինանսական մի շարք միջոցներ են գործադրված և այժմ իրանց հերթին են սպասում քաղաքային և ընտրողական վերանորոգութիւնները, որոնք պէտք է ժամանակակից Իտալիայի մէջ տիրապետող գլխաւոր չարիքի առաջն առնեն և ուղղեն նրա սահմանադրութեան պակասութիւնները։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Բերլինից հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Ցայտնի է, որ կայսր Վիլհելմի ցանկութեան համեմատ գերմանական թագաժառանգը պէտք է ուղևորվեր Ս. Պետերբուրգ ռուսաց թագաւորին ցաւակցութիւն յայտնելու և հանդուցեալ կայսրի թաղման հանդիսին ներկայ գտնվելու համար։ Սկզբից գերմանական կայսերական տան անդամները, մանաւանդ կանայք ընդդէմ էին այդ մտքին, ասելով, որ գերմանական թագաժառանգին և կայսրի միակ որդուն վտանգաւոր է ուղարկել մի երկիր, որտեղ քաղաքական սպանութիւններ են կատարվում և ականներ են փորում։ Բայց Ցերունի կայսրը յայտնեց, որ ոչինչ վտանգ չը կայ և չը փոխեց իր վճիռը։ Թագաժառանգը իշխան Բիսմարկի հետ երկար տեսակցութիւն ունենալուց յետոյ պիտի ուղևորվեր ռուսաց Մեծ Իշխանների հետ Ս. Պետերբուրգ, բայց նա յետաձգեց իր ճանապարհորդութիւնը, որովհետև Պետերբուրգից լուր ստացվեցաւ Կայսրի թաղումը ուշացնելու մասին և որովհետև թագաժառանգը կամենում էր ներկայ գտնվել իր տան ընտանեկան ծոնին։

Թէպէտ Լօնդօնի պոլիցիան գերմանական դեսպանի միջնորդութեամբ յայտնեց գերմանական կառավարութեանը, որ պէտք է զգոյշ լինել, որովհետև Լօնդօնի և Փարիզի նիհիլիստները մի նոր եղեռնագործութիւն են պատրաստում, որ պէտք է իրագործվի Կայսրի թաղման օրը, այնու ամենայնիւ թագաժառանգը ուղևորվեցաւ Պետերբուրգ։

Բերլինի մէջ նորերում քաղաքական մի նշանաւոր գործ կատարվեցաւ, որ աննկատելի կերպով անցաւ մինչև անգամ Գերմանիայի մայրաքաղաքում, որովհետև ամենքի ուշադրութիւնը դարձրած է Պետերբուրգի մէջ կատարված եղեռնագործութեան վրա։ Բայխստագը համաձայնութիւն տուեց կայսերական մի նոր մինիստրութիւն նշանակել առևտրի և արդիւնագործութեան համար։ Այդպիսով կայսերական կառավարութեան իշխանութիւնը աւելի էլ ընդարձակվում է և ընդհակառակը առանձին պետութիւնների անկախութիւնը սահմանափակվում է։ Բացի այդ կառավարութիւնը շարունակում է բանակցութիւնները պապի հետ և, ինչպէս երևում է, փոխադարձ զիջումներով համաձայնութիւն կը կայացնվի պապական կառավարութեան և Գերմանիայի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սերբիական իշխանը վաւերացրեց տպագրական ազատութեան նոր օրէնքը, որ մշակված է եղել սերբիական ազգային ժողովից։

—Հռոմի իտալական լրագիրները հաղորդում են, որ Գարիբալդի մահամերձ հիւանդ է։

—Ֆրանսիական ազգային ժողովի պատգամաւոր Սէն-Մարտէն առաջարկեց ժողովի քննութեանը մի նոր օրէնք, որով կաթոլիկ քահանաներին պիտի թոյլ տրվի ամուսնանալ։

—«Polit. Corresp.» լրագրին գրում են Կ. Պոլսից։ «Մինչդեռ Եւրոպան արևելեան խնդրի լուծելու բոլոր դժուարութիւնները տեսնում է յունական խնդրի վճռելու մէջ, Բ. Դուռը շատ լաւ է հասկանում, որ իսկական վտանգը Թիւրքիայի պետական գոյութեանը սպառնում է նրան ոչ թէ Եւրոպայում, այլ Թիւրքիայի ասիական նահանգներում»։ Լրագիրը ասում է որ անգլիական մինիստրներից մինը նորերումս ասել է. «Ես վախենում եմ, որ Սիրիան կը դառնայ մի երկրորդ Բոլգարիա»։ Զարմանալի է որ սըր Հէնրի Լայարդ, Կ. Պոլսից դուրս գալուց մի քանի ժամանակ առաջ գրում էր լորդ Գրէնվիլին, որ «Հայաստանը անչուշտ դառնալու է մի երկրորդ Բոլգարիա, որովհետև այդ երկրի մէջ կատարվում են այնպիսի ինտրիգաներ, ինչպէս մի ժամանակ Բոլգարիայումն էին կատարվում և թիւրքերը դրանով են հեշտացնում այդ ինտրիգաների կատարվելուն, որ կատարելապէս ոչինչ չեն անում հայերի իրաւացի պահանջներին բաւականութիւն տալու համար»։

—Ցիւրիխի «Züricher Zeitg.» լրագիրը պատասխանելով այն լրագիրներին, որոնք ասում են թէ Շվէյցարիան իսկապէս դոյութեան իրաւունք չունի, ասում է թէ Եւրոպան ճանաչել է Շվէյցարիային, որպէս անկախ պետութիւն և պահպանում է նրան որպէս անկախ պետութիւն ընդհանուր համաձայնութեամբ։ Թող չը մոռանան, աւելացնում է Ցիւրիխի լրագիրը որ 1848 թվին, երբ Եւրոպան փորձեց սպառնալ Շվէյցարիային, այդ սպառնալիքների հետևանքն այն եղաւ, որ նոյն տարին ծագեցին յեղափոխական շարժումներ Փարիզում, Վիէննայում և Բերլինում։

—Գերմանական պարլամենտի սոցիալ-դէմոկրատական կուսակցութիւնը պատրաստում է մի մանիֆեստ, որով հանդիսաւոր կերպով հրաժարվում է ռուս նիհիլիստների հետ որ և է համերաշխութիւնից։

—Լօնդօնի «Standard» լրագիրը լսել է, որ անգլիական կառավարութիւնը առաջարկութիւն է ստացել ռուսաց կառավարութեան կողմից դատի ենթարկել Լօնդօնում հրատարակվող «Freiheit» սոցիալական լրագրի պ. Մոստ խմբագրին, որ տպել է ռուսաց Կայսրի դէմ մի վիրաւորական յօդուած։

—Լուր կայ որ իշխան Բիսմարկ մի շրջաբերականով հրաւիրում է եւրոպական բոլոր տէրութիւններին համերաշխ կերպով գործել միջազգային յեղափոխութեան դէմ։

—Վիէննայից լրագիրներին հեռագրում են որ կոմս Անդրաշի նշանակվելու է արտաքին գործերի մինիստր Աւստրիայում։

—Վիէննայից հեռագրում են որ Աւստրիայի կայսրը առաջարկել է ռուս դեսպան կոմս Շուվալովին, երբ սա գալու է Վիէննա, բնակվել կայսերական պալատի մէջ։

—Բերլինի «Post» լրագրին գրում են Համբուրգից, որ այս օրերս այդ քաղաքի ռուսաց դիպլոմատական միսիայի անդամ բարոն Մէնդէն ստացել է մի յեղափոխական մատաժողովից իր կեանքի դէմ ի սպառնալիքներով թղթեր, որոնցով յայտնվում է բարոն Մէնդէնին, թէ նա դատապարտված է մահվան։ Այդ թղթերը արդէն յանձնված են պրոկուրորին և դատաստանական քննութիւն է նշանակված։

—«Բէյտրի հեռագրական ընկերութեանը» հաղորդում են Նիւ-Կէսալից, որ մարտի 16-ին այդտեղ լուր հասաւ Պէչէֆստրումից որ Անգլիայի և բօէրների մէջ հաշտութեան պայմաններ կապվեցան մի ծանր ճակատամարտից յետոյ, որի մէջ անգլիական զօրքերը կորցրին 18 սպանված և 90 վիրաւորված մարդ։ Բօէրները յափշտակեցին անգլիացիներից 3000 փամփուշտներ և երկու թնդանօթներ։

—Լուր կայ որ Բ. Դուռը հակված է զիջումներ անելու եւրոպական դեսպաններին յունական խնդրի վերաբերութեամբ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի։ Երէկ թագաւոր Կայսրը ընդունելով խորհուրդի 25 անդամներին, բաղդաւորացրեց իւրաքանչիւրին մի քանի ողորմած խօսքերով։ Երէկ խորհուրդը երկու նշանաւոր առաջարկութիւններ ընդունեց և վճիռներ կայացրեց։ Գաղտնի դատաստանը թագաւորասպանների մասին կը սկսվի մարտի 26-ին։ Կիբալչիչ նրանց հետ կը դատվի։ Նա ստացաւ մեղադրական ակտ։

ԶՄԻՒՌՆԻԱ, 23 մարտի։ Խիօս կղզու վրա երկրաշարժը աւերեց քաղաքի երեք քառորդ մասը։ Շատ զոհեր են գնացել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 93 ր. 37 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 224 ր. 50 կ., երկրորդ 217 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 92 ր. 62 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 92 ր. 62 կ., ոսկի 7 ր. 94 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,75 պէնս, Ամստերդամի վրա 125 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 211 մարկ, 12 պֆ., Փարիզի վրա 261 Ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է „Կենտրոնական“ և պ. Զ. Գրիգորեանցի „Կովկասեան“ գրավաճառանոցներում „Մտաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին“ հեղ. Զօն Ստիւարտ Բլէկկի. Թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի. գինն է 60 կոպէկ։ Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցէով՝. Въ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинарій Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետևեալ աշխատութիւնը. „Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած“. հեղ. Ժ. Ռամբօսսօնի։

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին զլխայաւի դէմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։
40—100

ՆՈՐ ՏՊԱՐԱՆ

ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՆՈՎՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ, տուն **ԻՇԽ. ԲԷՀԲՈՒԹՈՎԻ**

Այս օրերս բանալով **ԹԻՖԼԻԶՈՒՄ** լիակատար **ՏՊԱՐԱՆ** իր ամեն պատրաստութիւնը, ընդունում եմ ապելու **ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ** և ամեն տեսակ պատուէրներ. այն է՝ **ԳՐՔԵՐ, ԼՐԱԳՐԵՐ, ԱՄՍԱԳՐԵՐ, ԲԼԱՆԿՆԵՐ, ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿՆԵՐ, ՀԱՇՎԻ ՏԵՏՐԱԿՆԵՐ, ՏՈՄՍԱԿՆԵՐ, ՁԱՅԻ ԵՒ ԾԽԱԽՈՏԻ ԵԱՌԼԻԿՆԵՐ** (զանազան գոյների) և այլն։

Տպագրութեան մաքրութեանը և ապարանական կանոնների ճշտութեանը համար **ԻԲՐԵԻ ՄԱՍՆԱԳԷՏ** պատասխանատու եմ լինում միշտ։ **ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ** կը կատարուին **ԿԱՐՃ ՄԻՋՈՑՈՒՄ, ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ**։
3—5 (2)

Ստեփան **ԵՐԱՄԵԱՆՑ** ունի պատիւ յայտնելու որ նա ընդունում է **ՎԻԷՆՆԱՅՈՒՄ** կատարելու ամեն տեսակ առևտրական և այլ **ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**։

Հասցէն։ ВѢНА (Австрія) St. Jeramjanz, Hôtel Schröder. WIEN, II.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ գործարանական գներով **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ **ԱՐԾՐՈՒՆՈՒ** գալերէյում։ Նոյն տեղը ծախվում են անգլիական ֆիլտրաներ, մանանեխ, օսլայ (կրախմալ), կակաո, շօկոլադ, բաժակներ և դէմքը գեղեցկացնելու համար ծրծմբէ, կաթնի, նուշի և զլիցերինի իւղ։ Հրացաններ նոր ձևի։
10—12

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ծախվում են հազի դէմ **ԿՕՆՖԵԿՏՆԵՐ** 40 կ. ֆունտը, խինայի գինի ջերմի դէմ 1 ր. 50 կ. շիշը, պարսկական **ՇԵՐԲԵՏ**, ցիտրադ մագնեզիայի ծարաւի դէմ 70 կ., ամենալաւ **ԿՕՆԵԱԿ** 2 ր., հին **ՊՕՐՏ-ՎԷՅՆ ԵՒ** խերես 1 ր. 40 կ., **ՄԵՂՐԱՄՕՄ** և չոր **ՍԱՊՕՆ** և այլն։
10—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է „Կենտրոնական“ ու „Կովկասեան“ գրավաճառանոցներում **ՄՕԼԻԷՐԻ „ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ“, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ**։ Գինն է 30 կ.։

ՄԱՄՈՒԼԻ տակից դուրս եկաւ և շուտով կը տարածվի **„ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ“** գրքոյկը 96 երեսից բաղկացած և տպված **ԵՐԵՒԱՆՈՒՄ**։

Կը ծախվի առաւելապէս **ԹԻՖԼԻՍԻ** մէջ „Կենտրոնական գրավաճառանոցում։“
3—7.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառների մօտ Կ. Կոստանեանցի **„ԳՐԱԲԱՌ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ մի աղիւսակի մէջ, գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար“**։ Գինը՝ հատով՝ 25 կոպ., գումարով՝ 20 կ.։

Այս գրքոյկը պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախագիտելիք, յանգերի, օրինակների և խոնարհմանց ամփոփ աղիւսակներ՝ շատ հեշտացնում է աշակերտաց գրաբառ բայերի ուսումը։ Ի նկատի ունենալով գործի օգտակարութիւնը և գնի թեթևութիւնը համարձակ կարելի է խորհուրդ տալ գրաբառ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկասիրութիւնը։

Նոյն հեղինակի „Հիւսուածք հայ պատմագրաց“, 3 հատոր (3 ր.) և „Հայոց հեթանոսական կրօնը (30 կ.) կարելի է նոյնպէս Թիֆլիսի գրավաճառներից կամ ուղղակի հեղինակից ստանալ։

ԿԵԿԵԼ ՍՕԼՕՄՕՆՕՎՆԱ և նրա որդիք ԻՎԱՆ և ԲԱԳՐԱՏ ՇԱՀԲԱԶՈՎՆԵՐԸ յայտնելով առաջինը իր ամուսնի, իսկ երկրորդները իրանց հօր ԱՐՏԻՒՐ ԻՍԱՅԻՉ ՇԱՀԲԱԶՈՎԻ ՄԱՀՈՒԱՆ մասին, խնդրում են բարեկամներին և ծանօթներին գտնվել հանգուցեալի յուղարկաւորութեան հանդիսին ՇԱԲԱԹ, մարտի 28-ին։ Հանգուցեալի մարմինը կը տանեն կուկիս ԹԱՆԴՈՑԵԱՆ Աստուածածնի եկեղեցին իր սեփական տանից ԵԼԻԶԱՎԵՏԻՆՍԿԱՅԱ փողոցի վրա № 59։
1—2

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէվօլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, տուրնօլի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաշօկոլադի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը։
49—100

Մամուլի տակից դուրս եկան և վաճառվում են կենտրօնական գրավաճառանոցում հետևեալ գրքերը. Հենչէլի բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ, ծխական դպրոցների համար. փոխագրեց Ս. Մանդինեան 1-ն և 2-րդ տարի. Թիֆլիս 1881 գ. 40 կ.

Գրաբար բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. Գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար. յօրինեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, գ. 25 կ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը.

Սիրաք և Սամուէլ։ Բարի հօր կրթական դասեր։ Գրեց Թրիմեան հայրիկ Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Լ. Զէսարֆիլտի խրատ առ որդին իւր. Վենետիկ գ. 75 կ.

Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Թուղթ Մարկոսի Աղաբէգեանց։ Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցու ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական տէր Ներսէս պատրիարք Հայոց Կ. Պոլիս գ. 2 ր. 25 կ.

Պարոնեան, Ազգային ջոջեր 3 հատոր, Կ. Պոլիս գ. 3 ր. 5 կ.

Մանանայ։ Ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 75 կ.

Տարերք իմաստասիրութեան ընդարձակ Ի. Հ. Աւք. Վ. Գուրգենեան 5 Հ. Կ. Պոլիս գ. 3 ր. 50 կ.

Խորհրդական բերդը։ Վիպասանութիւն ֆօժէր օր. Գաղիացւոյ, Վենետիկ գ. 1 ր.

Լճակիս ձկնորսը, յօրինեց Հ. Յ. Վ. Խաչատրեանց։ Վենետիկ գ. 1 ր.

Միանսարեանց. Փնար Հայկական Ս. Պ. Բ. գ. 1 ր. 30 կ.

Մուզայք Հայաստանի։ Նոր երգարան Թիֆլիս գ. 50 կ.

Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ. աշխ. Գ. Երեցփոխեանց Թիֆլիս գ. 4 ր.

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ր. համար 10 կ. պատուէրները պէտք է ուղարկվեն այս հասցէով „Въ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю“.

ՄԱՍՆԱԳԷՏ Վ ԱՃԱՌԱԿԱՆ

ԴԷՅԿԱՐԽԱՆԵԱՆԻ

վաճառական տան

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Միխայլովսկի փողոցի վրա № 69.

Առաջարկում եմ պ. պ. ցանկացողներին օգուտ քաղել կամ Դէյկարխանեանի խանութից և կամ նշանաւոր և տաղանդաւոր, վերջին նորաձևութեանց ճարտարուեստ ճաշակով շորերի, լի մեծ շքեղութեամբ և արուեստով ինչպէս հազուադիւտ ձևոցի գործարանից։ A propos կատարվում են պատուէրներ զանազան սպիտակեղէնների և նոյնպէս ուղղելը, նորոգելը, կարելը, ձևելը. նոյն տեղում և լուանում են շապիկներ, սպիտակեղէն, շորեր և մաքրում են վերջիններս և պատրաստում են վարագոյրներ յայտնի արդէն եւրոպական օրինակով։
2—3 (7)

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շօկոլադ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բէվօլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, գանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թասքեր, դուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձևոքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալերէում։
100—72

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Марта 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.